ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

02.02.2022Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-22 ուստարվա I կիսամյակի ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում: (Զեկ. Վ. Աղաբաբյան)
2. Հաղորդում 2021-22 ուստարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին: (Զեկ. Վ. Աղաբաբյան)
3. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրում: (Զեկ. Վ. Աղաբաբյան)
4. I կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում: (Զեկ. Վ. Աղաբաբյան)
5. I կիսամյակի պրակտիկաների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացում և II կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդում: (Զեկ. Վ. Աղաբաբյան)

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ.Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2021-2022 ուստարվա I կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Նշվեց, որ քննաշրջանը իրականացվել է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն:

«Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» և «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնների կողմից իրականացվող դասընթացների արդյունքները ունեցել են հետևյալ տեսքը.

«Դիզայն» մասնագիտության IV կուրսում քննությանը մասնակցել է 8 ուսանող, որից 7-ը՝ հանձնել են բոլոր առարկաները, իսկ 1 ուսանող չի ներկայացել քննությանը: Բացարձակ առաջադիմությունը կազմել է 87,50%:

«Դիզայն» մասնագիտության III կուրսում քննությանը մասնակցել է 10 ուսանող, որից 6-ը՝ հանձնել են բոլոր առարկաները, իսկ 4 ուսանող ստացել են անբավարար գնահատական: Բացարձակ առաջադիմությունը կազմել է 60,00%:

«Դիզայն» մասնագիտության II կուրսում քննությանը մասնակցել է 12 ուսանող, որից 9-ը՝ հանձնել են բոլոր առարկաները, իսկ 3 ուսանող ստացել են անբավարար գնահատական: Բացարձակ առաջադիմությունը կազմել է 75,00%:

«Դիզայն» մասնագիտության I կուրսում քննությանը մասնակցել է 7 ուսանող, որից 6-ը՝ հանձնել են բոլոր առարկաները, իսկ 1 ուսանող չի ներկայացել քննությանը: Բացարձակ առաջադիմությունը կազմել է 85,71%:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» մասնագիտության III կուրսում քննությանը մասնակցել է 8 ուսանող, որից 7-ը՝ հանձնել են բոլոր առարկաները, իսկ 1 ուսանող ստացել է անբավարար գնահատական: Բացարձակ առաջադիմությունը կազմել է 68,50%:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» մասնագիտության II կուրսում քննությանը մասնակցել է 10 ուսանող, որից 7-ը՝ հանձնել են բոլոր առարկաները, իսկ 3 ուսանող ստացել են անբավարար գնահատական:Բացարձակ առաջադիմությունը կազմել է 70,00%:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» մասնագիտության I կուրսում քննությանը մասնակցել է 7 ուսանող, որից 7-ը՝ հանձնել են բոլոր առարկաները: Բացարձակ առաջադիմությունը կազմել է 100,00%:

Կիրառական արվեստի ֆակուլտետի 62 ուսանողներից 49-ը հանձնել են բոլոր առարկաները, իսկ 13 ուսանող ստացել են անբավարար գնահատական: Ֆակուլտետի բացարձակ առաջադիմությունը կազմել է 79,03%:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյան, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-22 ուստարվա I կիսամյակի ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան: Նա նշեց, որ ուսումնական պարապմունքները կվերսկսվեն փետրվարի ութից: Արդեն պատրաստ են երկրորդ կիսամյակի դասատախտակները, ձմեռային քննաշրջանի 1-ին լուծարքային շրջանի գրաֆիկները: Վ. Աղաբաբյանը հորդորեց վերջնական տեսքի բերել երկրորդ կիսամյակի առարկայական փաթեթները, հարցաշարերը, պրակտիկայի ծրագրերը և ներկայացնել մասնագիտական ամբիոն: 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում ուսումնական պրակտիկա ունեն «Դիզայն» III և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» III կուրսերը, իսկ մասնագիտական պրակտիկա՝ «Դիզայն» IV կուրսը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-22 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի կողմից 2021-2022 ուստարվա II կիսամյակում անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների ցուցակը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է

հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը:

Ձեկուցողը առանձնացրեց «Դիզայն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհիներ Մանե Սարհատյանին և Արուսյակ Ղարախանյանին: Վերջիններս չորս կիսամյակ անընդմեջ ցուցաբերել են գերազանց առաջադիմություն: Վ. Աղաբաբյանը առաջարկեց Մ. Սարհատյանին ներկայացնել որպես «Սպարտակ Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու, իսկ Ա. Ղարախանյանին «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Ձեկուցողը առանձնացրեց «Կիրառական արվեստ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողներ Սարինե Ամիրյանին, Մարիամ Ռնազյանին և Քրիստինե Գևորգյանին: Վերջիններից Ս. Ամիրյանը ցուցաբերել է երեք, իսկ Մ. Ռնազյանը և Ք. Գրիգորյանը՝ չորս կիսամյակ անընդմեջ ցուցաբերել են գերազանց առաջադիմություն: Վ. Աղաբաբյանը առաջարկեց Ս. Ամիրյանին ներկայացնել որպես «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու, Մ. Ռնազյանին «Իջևան» քաղաքի անվանական կրթաթոշակի թեկնածու, իսկ Ք. Գևորգյանին «Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Վ. Աղաբաբյանը առանձնացրեց նաև «Դիզայն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Մետաքսե Մելյանի և Անի Դավթյանի թեկնածությունները: Ա. Դավթյանը ցուցաբերել է վեց, իսկ Մ. Մելյանը՝ յոթ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն: Ձեկուցողն առաջարկեց Մ. Մելյանին ներկայացնել որպես «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի թեկնածու, իսկ Ա. Դավթյանին «Շիրակ Գասպարյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Տ. Բագամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու Մետաքսե Մելյանին որպես «ԵՊՀ», Մանե Սարհատյանին՝ «Սպարտակ Սարգսյան», Սարինե Ամիրյանին՝

«Վազգեն Սարգսյան», Արուսյակ Ղարախանյանին՝ «Մոնթե Մելքոնյան», Քրիստինե Գրիգորյանին՝ «Արտակ Յուզբաշյան«, Մարիամ Ռևազյանին՝ «Իջևան», Անի Դավթյանին՝«Շիրակ Գասպարյան» անվանական կրթաթոշակի թեկնածուներ:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Նա նշեց, որ I կիսամյակում ունեցել են հետազոտական աշխատանք ներառող մասնագիտական դասընթացներ: Գիտահետազոտական աշխատանքների թեմաները ամբիոններ են ներկայացվել 2021-2022 ուսումնական տարվա սկզբին: Ուսանողները նախօրոք ծանոթացել, ընտրել և սկսել են աշխատանքները: Ողջ կիսամյակի ընթացքում պարբերաբար անդրադարձ է եղել հետազոտական աշխատանքների թեմաներին, և դրանք քննարկվել են թե՛ դասերի ընթացքում /եթե համընկել են ծրագրով նախատեսված նյութի հետ/ և թե՛ դասերից դուրս՝ ZOOM հարթակում կազմակերպված հանդիպումների ժամանակ: Կարևորելով հարցը՝ ամբիոններում քննարկվել են հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաները, դրանք ղեկավարած դասախոսները ներկայացրել են համապատասխան հաշվետվություններ:

Զեկուցողն ընդհանուր առմամբ կարևորեց հետազոտական բաղադրիչը՝ որպես շատ անհրաժեշտ, ինքնուրույն, ստեղծագործական և հետաքրքիր աշխատանք, որն անհրաժեշտություն է ուսանողի համար:

Զեկուցողը նշեց, որ ուսանողները պատասխանատվության բարձր զգացումով են մոտեցել հետազոտական աշխատանքներին, և ներկայացվել են լավ աշխատանքներ: Աշխատանքի ընթացքում փորձ է արվել նոր մոտեցումներ ցուցաբերել դասընթացներին, որպեսզի ուսանողները հստակ պատկերացնեն իրենց կատարելիք աշխատանքի նպատակը, խնդիրները և արդիականությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա I կիսամյակի ընթացքում ֆակուլտետում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ, Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ ուսումնական պլանով ուսումնական պրակտիկաներ են նախատեսված եղել «Դիզայն» III, «Դիզայն» IV /Ղեկավար՝ Ա. Չիբուխչյան/ և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» III /Ղեկավար՝ Դ. Չիբուխչյան/ կուրսերում: Պրակտիկան իրականացվել է հաստատված դասատախտակով, եղել է ՄԿՊԿ բաժնի մշտական հսկողության տակ: Ուսանողների մասնակցությունը և ցուցաբերած արդյունքները եղել են գոհացուցիչ: Այդ մասին են փաստել նաև ղեկավարները՝ ներկայացրած հաշվետվություններում:

Զեկուցողը ավելացրեց, որ ընթանում են II կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքները: 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում ուսումնական պրակտիկա ունեն «Դիզայն» III և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» III /Ղեկավար՝ Դ. Չիբուխչյան/ III և III կ/ա կուրսերը, իսկ մասնագիտական պրակտիկա՝ «Դիզայն» IV կուրսը /Ղեկավար՝ Մ. Մելքումյան/: Զեկուցողը նշեց, որ նման մեծ ժամաքանակով մասնագիտական պրակտիկա ֆակուլտետում իրականացվում է առաջին անգամ: Պրակտիկայի նպատակն է ավարտական աշխատանքի ոլորտային շրջանակներում իրականացնել հետազոտական աշխատանք և հիմնավորել նախագծի գործնական նշանակությունը: Պրակտիկայի ղեկավարի անմիջական հսկողությամբ ուսանողները աշխատելու են իրենց ավարտական նախագծի վրա՝ գրելու են աշխատանքի հետազոտական մասը, ստեղծելու համապատասխան նախագծեր և մակետներ: Բացի այդ՝ նրանք ստեղծելու են իրենց ուսումնառության ընթացքը բնորոշող աշխատանքների փաթեթ՝ պորտֆոլիո, որը ևս հանձնելու են մասնագիտական ամբիոն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) 2021-2022 ուսումնական տարվա I կիսամյակի պրակտիկաների աշխատանքները գնահատել բավարար,

բ) 2021-2022 ուսումնական տարվա II կիսամյակի պրակտիկաների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ